ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստան-Եվրոպական միություն Վիզաների ազատականացման երկխոսության վերաբերյալ

Նոյեմբեր 2024, Երևան

Ներածություն

Հայաստանն ու Եվրոպական միությունը շարունակաբար զարգացնում են գործընկերությունը՝ ընդլայնելով համագործակցության ուղղությունների շրջանակն ու առավել խորացնելով առկա ուղղություններում տարվող աշխատանքները: Այս համատեքստում կարևոր առաջընթաց է Վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկը, ինչը 2024թ. սեպտեմբերի 9-ին ազդարարվեց փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի և Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Մարգարիտիս Սխինասի համատեղ հայտարարությամբ[1]:

Սույն փաստաթուղթը հակիրճ ներկայացնում է Հայաստանի և Եվրոպական միության՝ մարդկանց միջև շփումների խթանման շուրջ համագործակցության ճանապարհը՝ անդրադառնալով երկխոսության մեկնարկին նախորդած գործակցությանը, ինչպես նաև երկխոսության շրջանակում ակնկալվող տեխնիկական և քաղաքական գործընթացներին: Ուսումնասիրելով ԵՄ հետ ազատ վիզային ռեժիմ ունեցող երկրների փորձը՝ փաստաթուղթը կանխատեսում է Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի ուղղություններն ու բարեփոխումների շրջանակը:

Նախապատմություն. «մարդկանց շփումները» ՀՀ-ԵՄ օրակարգում

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև համագործակցության առաջին ընդգրկուն փաստաթուղթը՝ Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը[2], ստորագրվել է 1996թ. և ուժի մեջ մտել 1999թ.: Չնայած այն հանգամանքին, որ այս համաձայնագրով դեռևս ուղղակիորեն չի խոսվում «մարդկանց միջև շփումների» խթանման մասին՝ այն արդեն իսկ նախատեսում է տարբեր ոլորտներում աշխատող մասնագետների համագործակցության խթանում և փորձի փոխանակում: 2004թ. մեկնարկած Եվրոպական հարևանության քաղաքականությամբ[3], իսկ այնուհետև նաև 2009թ. մեկնարկած Արևելյան գործընկերության ծրագրով[4] հստակ կարևորվում է «մարդկանց միջև շփումների» խթանումը՝ որպես կողմերի համագործակցության

[1] https://www.gov.am/am/news/item/15944/
[2] https://www.irtek.am/views/act.aspx?aid=25153
[3] https://www.eeas.europa.eu/eeas/european-neighbourhood-policy_en
[4] https://www.eeas.europa.eu/eeas/eastern-partnership_en

առանցքային ուղղություններից մեկը: Այս ուղղությամբ կարևոր ձեռքբերումներից են 2012թ. դեկտեմբերին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև մուտքի արտոնագրերի տրամադրումը դյուրացնելու մասին», և 2013թ. ապրիլին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագրերը: Հարցին ուղղակիորեն անդրադարձ է կատարվում նաև 2017թ. նոյեմբերին ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում, որի Հոդված 15-ով ամրագրվել է, որ «կողմերը […] պատեհ ժամանակ կդիտարկեն մուտքի արտոնագրի ազատականացման շուրջ երկխոսություն սկսելու հարցը՝ պայմանով, որ արդյունավետ կառավարվող և անվտանգ շարժունակության վերաբերյալ պայմանները գործեն»[5]: 2024թ. սեպտեմբերի 9-ին ազդարարվել է Վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկը:

<u>Վիզաների դյուրացման և Հետընդունման մասին համաձայնագրեր</u>

Վիզաների դյուրացման համաձայնագրով[6] պարզեցվել են ՀՀ քաղաքացիների՝ կարճաժամկետ (180 օրվա յուրաքանչյուր ժամանակահատվածի ընթացքում 90 օրվանից ոչ ավել ժամանակահատվածով) Շենգեն վիզա ստանալու կարգն ու պայմանները: Մասնավորապես՝ համաձայնագրով սահմանվել են հետևյալ հիմնական փոփոխությունները՝

- ⇒ վիզայի դիմելու գործընթացի համար սահմանվել է ներկայացվելիք փաստաթղթերի միասնական և պարզեցված ցանկ,
- ⇒ վիզայի վճարը 60 եվրոյից նվազեցվել է 35 եվրոյի, իսկ որոշ խմբեր (ուսանողներ, գիտնականներ, լրագրողներ, սպորտսմեններ և այլք) ամբողջությամբ ազատվել են վիզայի վճարից,
- ⇒ վիզայի դիմող մի շարք խմբերի (գործարարներ, քաղհասարակության ներկայացուցիչներ, գիտնականներ, լրագրողներ և այլք) համար հասանելի է դարձել երկարաժամկետ բազմակի մուտքով վիզաների տրամադրումը,
- ⇒ սահմանվել է վիզայի տրամադրման համար դիմումի քննության ժամկետ՝ 10 օրացուցային օր, հատուկ դեպքերում մինչև 30 օրացուցային օր երկարաձգվելու հնարավորությամբ:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Վիզաների դյուրացման համաձայնագրով սահմանված մի շարք արտոնություններ դե ֆակտո չեն գործում ՀՀ քաղաքացիների համար՝ հաշվի առնելով, որ վերջիններս չեն կարողանում վիզայի դիմում ներկայացնել՝ հյուպատոսական ծառայությունների գերծանրաբեռնվածության և ամիսներ տևող

[5] https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ARM_1.pdf
[6] https://www.mfa.am/filemanager/Statics/EU_AM_VFA_am.pdf

հերթերի պատճառով: Արդյունքում՝ քաղաքացիները ստիպված են լինում դիմել երրորդ կազմակերպությունների աջակցությանը՝ վիզայի դիմումի օր ամրագրելու նպատակով, ինչի հետևանքով անարդյունավետ են դառնում վիզայի վճարի և դիմումների քննման ժամկետի նվազեցման դրույթները:

Հետընդունման մասին համաձայնագրով[7] սահմանվել են հստակ ընթացակարգեր անվտանգ ու կանոնակարգված վերադարձի համար: Մասնավորապես՝ ամրագրվել է.

⇒ կողմերի հստակ հանձնառությունը սեփական քաղաքացիների հետընդունման վերաբերյալ (մինչ այդ հետընդունումն իրականացվում էր մի շարք անդամ պետությունների հետ ունեցած առանձին համաձայնագրերով կամ դրա բացակայության դեպքում միջազգային իրավունքի ուժով),
⇒ վերադարձի պարզեցված և ստանդարտացված ընթացակարգ,
⇒ ճամփորդական փաստաթղթերի տրամադրման պարզեցված կարգ՝ 3 օրվա ընթացքում,
⇒ երրորդ երկրների քաղաքացիների հետընդունման ընթացակարգ, եթե վերջիններս անօրինական կերպով գտնվում են կողմերից մեկի տարածքում մյուսի միջոցով (օրինակ՝ ունենալով բնակության թույլտվություն),
⇒ անձնական տվյալների և մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող դրույթներ:

<u>Վիզաների ազատականացման երկխոսության տեխնիկական և քաղաքական ասպեկտներ</u>

Մինչ օրս Եվրոպական միությունը վիզաների ազատականացման երկխոսություն իրականացրել է Արևմտյան Բալկանների և Արևելյան գործընկերության մի շարք երկրների հետ, մասնավորապես՝ Ալբանիայի, Բոսնիա և Հերցեգովինայի, Մոնտենեգրոյի, Հյուսիսային Մակեդոնիայի, Սերբիայի, Մոլդովայի, Վրաստանի, Ուկրաինայի, ինչպես նաև Կոսովոյի հետ: Գործընթացը բավականին սահուն և արագ է ընթացել Արևմտյան Բալկաններում (2008-2010թթ., բացառությամբ Կոսովոն՝ 2008-2012թթ.)՝ Երկխոսության մեկնարկի պահին առանցքային ուղղություններում քաղաքականությունների արդեն իսկ մոտարկված լինելու պատճառով: Արևելյան գործընկերության անդամ 3 պետություններում Երկխոսությունն իրականացվել է տարբեր ժամկետներում: Այսպես՝ Ուկրաինայում այն տևել է 9 տարի (2008-2017թթ.), Մոլդովայում՝ 4 տարի (2010-2014թթ.), Վրաստանում՝ 5 տարի (2012-2017թթ.):

Համաձայն առկա փորձի՝ երկխոսության տեխնիկական մասը մեկնարկում է Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի մշակմամբ, որը կողմերի հետ

[7] https://www.mfa.am/filemanager/Statics/Agreement_EU_Readmissiom_Arm.pdf

կոնսուլտացիաների արդյունքում մշակում և ներկայացնում է Եվրոպական հանձնաժողովը: Փաստաթուղթը, որպես կանոն, սահմանում է չորս հիմնական ուղղություններում ակնկալվող բարեփոխումների շրջանակը.

1. **Տվյալների պաշտպանություն և փաստաթղթերի անվտանգություն**. այս ուղղությամբ նախատեսված բարեփոխումները ներառում են միջոցառումներ ուղղված եվրոպական ստանդարտներով կենսաչափական համակարգի ամբողջական ներդրմանը, ճամփորդական փաստաթղթերի տրամադրման կարգի մոտարկմանը, կեղծ փաստաթղթերի տրամադրման կանխարգելմանը,
2. **Սահմանների կառավարում, միգրացիա և ապաստան.** այս ուղղությամբ նախատեսված բարեփոխումները ներառում են միջոցառումներ ուղղված սահմանային հսկողության ուժեղացմանը, ապաստանի կենսունակ համակարգի ստեղծմանը, միգրացիայի կառավարման մարմնի կարողությունների շարունակական զարգացմանը,
3. **Հանրային կարգ և անվտանգություն.** այս ուղղությամբ նախատեսված բարեփոխումները ներառում են միջոցառումներ ուղղված կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարին, դատաիրավական մարմինների անկախության ամրապնդմանը, ինչպես նաև նախատեսում են խորացված համագործակցություն կողմերի իրավապահ մարմինների միջև,
4. **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանություն.** այս ուղղությամբ նախատեսված բարեփոխումները ներառում են միջոցառումներ ուղղված մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ստանդարտների ապահովմանը, միգրանտների, ապաստան հայցողների և փախստականների իրավունքների ապահովմանը՝ ներառյալ տարբեր կոնվենցիաներին միանալու միջոցով:

Համաձայն սահմանված ընթացակարգի՝ Եվրոպական հանձնաժողովը պարբերաբար գնահատում է բարեփոխումների իրականացման արդյունավետությունը: Բավարար առաջընթաց արձանագրելուց հետո Հանձնաժողովը Եվրոպական միության խորհրդին և Եվրոպական խորհրդարանին ներկայացնում է առաջարկ՝ տվյալ երկրի քաղաքացիներին առանց վիզայի մուտքի իրավունք տրամադրելու վերաբերյալ: Եվրոպական խորհրդարանում հարցի վերաբերյալ որոշումը կայացվում է պարզ մեծամասնությամբ, իսկ ԵՄ խորհրդում անհրաժեշտ է որակյալ մեծամասնություն: Այնուամենայնիվ, փորձը ցույց է տալիս, որ ԵՄ խորհրդում վիզաների ազատականացմանն առնչվող հարցերը դրվում են քվեարկության միայն այն ժամանակ, երբ ձևավորվում է ոչ ֆորմալ կոնսենսուս անդամ պետությունների շրջանում՝ հաշվի առնելով միգրացիոն հարցերի քաղաքական զգայունությունը: Հետևապես՝ բացի վերոգրյալ ոլորտներում սահմանված բարեփոխումները, անհրաժեշտ է հաշվի առնել հարցի քաղաքական ասպեկտները, որոնք կարող են ազդել անդամ պետությունների որոշումների վրա: Մասնավորապես՝

⇒ **Եվրոպական միության ներսում միգրացիոն քաղաքականության նկատմամբ աճող զգայունությունը՝** հատկապես աջերի և պոպուլիստական ուժերի ազդեցության աճի ֆոնին,

⇒ **ԵՄ ներսում ավանդաբար ազդեցիկ պետությունների ազդեցության թուլացումը՝ բարդ ներքաղաքական գործընթացների ֆոնին** (լուրջ տարաձայնություններ ֆինանսատնտեսական, միգրացիոն և կլիմայական քաղաքականությունների շուրջ իշխող կոալիցիոն ուժերի միջև Գերմանիայում, 2024թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում հետընտրական բարդ գործընթացներ Ֆրանսիայում. ձայների քանակի մոտ բաշխվածություն ձախերի, կենտրոնամետների և աջերի միջև),

⇒ **Աշխարհաքաղաքական գործընթացները.** Ռուսաստան-Ուկրաինա պատերազմի արդյունքում տարածաշրջանում ԵՄ քաղաքականության տարբեր սցենարներ, ԵՄ-Վրաստան բարդ հարաբերություններ,

⇒ **ԵՄ անդամ պետությունների և Ադրբեջանի միջև տնտեսական կապերը, մասնավորապես՝ խորացող համագործակցությունը Էներգետիկ և ռազմական ոլորտներում:**

<u>Ամփոփում</u>

Հայաստանն ու Եվրոպական միությունը երկար ճանապարհ են անցել մարդկանց միջև շփումները խթանելու նպատակով: Չնայած Վիզաների դյուրացման համաձայնագրով սահմանված արտոնություններին՝ վիզաների դիմելու գործընթացում ՀՀ քաղաքացիները շարունակում են առերեսվել մի շարք խնդիրների՝ պայմանավորված աճող պահանջարկի ֆոնին հյուպատոսական ծառայությունների ծանրաբեռնվածությամբ: Այս խնդիրն ամբողջությամբ և հիմնովին հնարավոր կլինի լուծել միայն վիզաների ազատականացմամբ: Այս հանգրվանին հասնելու համար Հայաստանը լուրջ բարեփոխումներ պետք է իրականացնի՝ տվյալների պաշտպանության, սահմանների կառավարման, հանրային կարգի և անվտանգության, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում: Առկա համադրելի երկրների փորձը ցույց է տալիս, որ այս աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ կլինեն տարիներ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ հարցի վերաբերյալ որոշումը կայացնում են ԵՄ անդամ պետությունները, Հայաստանը պետք է ինտենսիվ աշխատի բոլոր պետությունների հետ՝ ապահովելու անհրաժեշտ քաղաքական աջակցություն:

Մանե Ադամյան
Եվրոպական միության հետ ռազմավարական համագործակցության հարցերով ավագ խորհրդատու